

Առնէ շարժմունս մեծամեծս .
Որ հոլովին փալարք լերան ,
Որ ոչ կարէ ոք դադարեալ .
Թռչունք երկրի և ոչ օդական :

Դ(ա)րձ(եա)լ լերինք ք(ա)ն զմոմ հալին .
Ըստ Ս(ա)ղ(մո)սի ձայնին Դ(ա)լթեան ,
Ո(ր)պ(էս) ծխոյ ձանձախարիդ .
Սեւագունին եւ դաշտանան :

Դ(ա)րձ(եա)լ աղբիւրք արիւն բխեն .
Եւ թանձրամած խոնաւանան ,
Ոչ կարեն ըզնա ըմպել .
Ի ոչ ծարաւեալքն յագենան :

Եւ գերեզմանք յայտնի լինին .
Որ են կնքեալ ի պահըստեան ,
Յառնեն մեռեալք եւ ոչ խօսին .
Բայց զօրինակ առնեն նշան :

Ելանէ գետ հրեղէն .
Ի հեղեղի չափն ի նման .
Ի քառանկիւնըս տարածի .
Պատէ զէակըս զամ(ենայն) :

Արզարոց փառք է եւ պարզեւք .
Որ զգենուն եւ զուարճանան ,
Մեղ(ա)լ(ո)ր(ա)ցն է հուրն անչէջ .
Որ միգախառն մոմոան :

Բայց լուսաւորքն խաւարին .
Եւ թօթափին աստեղք լրման ,
Բայց օրինակն որ երեւի .
Աստեղք ի յիւր տեղիքն կան :

Այս փոփոխումն է որ յայտնի .
Երկինք և երկիր նոր կերպարան ,
Որ զանցելոցն ցուցանէ .
Յայտնէ զայժմոյս եւ զապագան : (*)

(*) Անդ էջ 48ա--50ա . :